Արձանագրություն N 23

ՀՀ ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-2023/4 ծածկագրով գնումների էլեկտրոնային համակարգի (ARMEPS) միջոցով էլեկտրոնային աճուրդով Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի կարիքների համար մաքսային հսկողության սարքավորումների ձեռքբերման գնահատող հանձնաժողովի արտահերթ նիստի

ք. Երևան

14 հունիսի 2023թ
ժամը 10:00

Մասնակցում էին գնահատող հանձնաժողովի ղեկավար՝ Արտակ Մանգասարյանը, անդամներ՝ Արտակ Գալստյանը և քարտուղար՝ Սպարտակ Հարությունյանը: Նիստից բացակայում էր Հուսիկ Մարտիրոսյանը:

Օրակարգ
ՀՀ ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-2023/4 ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի բացման և գնահատման մասին

ՀՀ ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-2023/4 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի ղեկավար Արտակ Մանգասարյանը նիստը հայտարարեց բացված: Հայտերի վերջնաժամկետին հայտ են ներկայացրել ներքոհիշյալ մասնակիցները

Հ/Հ	Մասնակցի անվանումը	(ԱԱՀ վճարող) կամ (ԱԱՀ չվճարող)	Գնային առաջարկ / ՀՀ դրամ առանց ԱԱՀ /	Պլանավորված գին /ՀՀ դրամ /
1	«Ֆասթ Սքան» ՍՊԸ	(ԱԱՀ վճարող)	315235800	567000000
2			517694760	723240000
3			255255000	540000000
4			412500000	600000000
5	«Ֆասթ Սքան» ՍՊԸ	(ԱԱՀ վճարող)	1453636800	1974000000
	Unisplendour Corporation Limited	(ԱԱՀ չվճարող)	1468320000	
6	«Ֆասթ Սքան» ՍՊԸ	(ԱԱՀ վճարող)	5166666666.67	6300000000
	Unisplendour Corporation Limited	(ԱԱՀ չվճարող)	5216400000	
7	«Ֆասթ Սքան» ՍՊԸ	(ԱԱՀ վճարող)	2295216000	3276000000
	Unisplendour Corporation Limited	(ԱԱՀ չվճարող)	2318400000	

Հաշվի առնելով ապրանքի ամբողջական նկարագրի ծավալը, քննարկման արդյունքում հանձնաժողովը որոշեց հայտերի ուսումնասիրության նպատակով ընթացակարգը կասեցնել և այն վերսկսել սույն թվականի հունիսի 29-ին ժամը 10:00-ին, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մ.Խորենացու-3 հասցեում:

29.06.2023թ. ժամը 10:00-ին հանձնաժողովի նիստը վերսկսվեց: Մասնակցում էին գնահատող հանձնաժողովի ղեկավար՝ Արտակ Մանգասարյանը, անդամներ՝ Արտակ Գալստյանը և քարտուղար՝ Սպարտակ Հարությունյանը: Նիստից բացակայում էր Հուսիկ Մարտիրոսյանը: Գնահատող հանձնաժողովի ղեկավար Արտակ Մանգասարյանը նիստը հայտարարեց բացված: Ուսումնասիրելով համակարգի կողմից առաջին տեղ զբաղեցրած մասնակցի ներկայացված հայտում ներառված

փաստաթղթերը հանձնաժողովը պարզեց, որ դրանք չեն համապատասխանում հրավերի պահանջներին. մասնավորապես երրորդ չափաբաժնում հրավերով սահմանված է «կոնվեյերի բարձրությունը ավտոմեքենայի հատակից 0,3-0,4մ,» իսկ մասնակցի կողմից ներկայացված ապրանքի ամբողջական նկարագիր դաշտում նշված է «Կոնվեյերի բարձրությունը գետնից 0,3 մ»:

Հանձնաժողովը որոշեց ընթացակարգը կասեցնել մեկ աշխատանքային օրով և «Ֆասթ Սքան» ՍՊԸ-ին առաջարկել հրավերով սահմանված կարգով և ժամկետում շտկել արձանագրված անհամապատասխանությունը: Հանձնաժողովի հաջորդ նիստ հրավիրել սույն թվականի հուլիսի 3-ին ժամը 10:00-ին, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մ.Խորենացու-3 հասցեում:

03.07.2023թ. ժամը 10:00-ին հանձնաժողովի նիստը վերսկսվեց: Մասնակցում էին գնահատող հանձնաժողովի ղեկավար՝ Արտակ Մանգասարյանը, անդամներ՝ Արտակ Գալստյանը և քարտուղար՝ Սպարտակ Հարությունյանը: Նիստից բացակայում էր Հուսիկ Մարտիրոսյանը: Գնահատող հանձնաժողովի ղեկավար Արտակ Մանգասարյանը նիստը հայտարարեց բացված և ներկայացրեց, որ «Ֆասթ Սքան» ՍՊԸ-ն սահմանված կարգով և ժամկետում շտկել է արձանագրված անհամապատասխանությունը: Բացի այդ նշված ընկերությունը որոշ չափորոշիչներ է փոփոխել երրորդ և չորրորդ չափաբաժիններում և խմբագրում կատարել հինգերորդ և յոթերորդ չափաբաժիններում:

Հանձնաժողովը նիստի ընթացքում գնահատեց առաջին տեղ զբաղեցրած մասնակից «Ֆասթ Սքան» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը, արձանագրեց որ կատարված փոփոխությունները հրավերով սահմանված չափորոշիչների շրջանակում են, բավարարում են պետական եկամուտների կոմիտեի պահանջները, չեն խախտում այլ մասնակիցների իրավունքներն ու շահերը:

Հանձնաժողովը որոշեց՝

- «Ֆասթ Սքան» ՍՊԸ-ի հայտը գնահատել բավարար և նրան ճանաչել որպես ընտրված մասնակից բոլոր չափաբաժինների մասով:

- Unisplendour Corporation Limited-ի հայտը մերժել՝ ՀՀ կառավարության 18.05.2017թ. թիվ 534-Ն որոշման 10-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն:

- հաշվի առնելով, որ սույն ընթացակարգով նախատեսված է անգործության ժամկետ, դրա ավարտից հետո «Ֆասթ Սքան» ՍՊԸ-ին ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ՝ պահանջելով ներկայացնելու որակավորման և պայմանագրերի ապահովումները՝ հրավերի պահանջներին համապատասխան:

Ընթացակարգն ամփոփվեց 03.07.2023թ. ժամը 12:00-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 2, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի

ղեկավար _____ Արտակ Մանգասարյան

անդամներ _____ Արտակ Գալստյան

քարտուղար Սպարտակ Հարությունյան